

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒՆ

ՆԱԽԵՍ ԿԱՐ ԱՆԿ ԲՂԹԱԳՈՐԾՈՒՄ

ՊԵՏԵ ԵՆՈՒՂԱՆ ԿՈՒ

Վարչութիւնն ՆՈՐ ՕՐ ԲԱԳՐԻ

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ժ. ՄԻՆՆԻԻ

# ՆՈՐՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՌՈՒԻ ԶՈՐԵՔՇՄԱԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

ՂՐՇ. ՈՂՋ

Գանձիւի համար արեւելյան 50

» » վեցամսեայ 30

Շրջակայից » արեւելյան 60

» » վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇՄԱՐ

Տարեկան . . . . . Ֆրանկ 18

Վեցամսեայ . . . . . » 10

ՌՈՍՏՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇՄԱՐ

Տարեկան . . . . . ռուբլի 7

Վեցամսեայ . . . . . » 4

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆԵԿ ԵՒ

ԵՒ ՌՂԲԱՏԱՐԻ ՇՄԱՐԸ

Թերթից վարչութեան վրայ է

ԶՈՐԵՔՇՄԱԹԻ ՄԱՐՏ 28/10 ԱՊՐԻԼ 1901

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 81

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

Պարոնը ստամբուլին համար անլի կուզէ կերակուրը, իսկ տիկինը ազի: Պարոնը կերակուրը իւզոտ կուզէ, տիկինը չուզեր: Պարոնը շաքարը քիչ կուզէ կաթնապուրը, իսկ տիկինը շաքարը շատ: Պարոնը առատաձեռն է, իսկ տիկինը կցցի: Պարոնը կարգապահութիւն չունի, տիկինը չափազանց կարգապահ է: Վերջապէս պարոնը աջէն քաշէնք կ'ըսէ, տիկինը ձախէն:

Ահաւասիկ էրիկ կնկան մը սովորական կոխները:

Ո՞վ չը դիտեր թէ այր և կնոջ մէջ պատահած վէճերուն մեծ մասը այս տեսակ ջնջին պատճառներէ չի ծագիր մեր մէջ: «Էրիկ կնիկ իրարու հետ բնա սիրով չեն» խօսքը շատ լուսած է, բայց անգամ մըն ալ թող հարցնեն թէ ինչ բանի համար սիրով չեն, պիտի տեսնէք որ ուրիշ պատճառ մը ցոյց չի պիտի տան ձեզի բայց եթէ մեր վերը թուած պատճառներէն մին կամ միւսը, Շատ քիչ անգամ կը պատահի որ այդ պատճառներէն դուրս ուրիշ բանաւոր պատճառ մը նշանակեն ձեզ:

Անոնք որ քիչ շատ առիթ ունեցած են էրիկ կնկան կոխներուն մէջ քիթերնին մոցնել, և հաշտարար միջնորդի մը դերը կատարել, ու կըրցած են իրենց ստանձնած անկախիւս պաշտօնին բերմամբ, այդ վէճերուն հոգեբանական շարժառիթները ուսումնասիրել, սա անհրաժեշտ եղբակացութեան յանգամ են թէ՛ արդարեւ էրիկ կնկան մէջ ծագած կոխները Եւրոպացիներէ աւելի մեր մէջ նամանակնո՞ղ՝ գաւաթ մը ջուրին մէջ կըրցած մեծ փոթորիկին կը նմանին:

Այնպիսի պատճառներ՝ որոնց վրայ ծանրանալը, մրկիլ տապկելը չ'արժեք մատի փաթթոց կ'ըլլան յաճախ մեր ամուսիններու կողմէն, և բնականական անգործութիւնը վրդովելու աստիճան, կրնամ ըսել, ազմուկներու և տեսարաններու տեղի կը տրուին:

Չեմ ըսեր թէ այր մը թող աչք խփէ իր կնոջը ըրած անվայել վարմունքներուն, ոչ ալ կը մեղադրեմ

կին մը որ կը բողբէ իր ամուսնոյն մոլութիւններուն դէմ:

Չոր օրինակ առաջինն ըլլալով ես կ'ընդունիմ թէ ամուսին մը որ խաղամու է և կամ գինով, ինչպէս կրնայ հաճելի ըլլալ իր կնոջը, եթէ կինը կ'առէ խաղամուլութիւնը ու գինովութիւնը, և ըսէ՛ք այդ խեղճ կնոջ ինչպէս չի բողբէ այդ մոլութիւններուն դէմ:

Նմանապէս կին մը որ գաղտնի յարաբերութիւններ կը մշակէ ասոր անոր հետ, ինչպէս կրնայ սիրով իր ամուսինէն, և որքան արժանապատուութիւնը չի ճանչցող ամուսին ըլլալու է որ լռէ իր կնոջ անբարոյական վարմունքին դէմ: Նաև կին մը որ իր արդուզարդին ու բուսբային դրամ հասցնելու համար, իր ամուսինը պարտքի մէջ կը խեղդէ, ինչպէս կրնայ ընդունիլ որ այդ կնոջ հաճելի ըլլայ իւր ամուսնոյն:

Ահաւասիկ պարագաներ որոնց վրայ կ'արժէ խորհրդածիլ ու վիճիլ լրջօրէն: Պարագաներ որ երբեմն անհրաժեշտ կը դարձնեն ամուսնալուծութեան պետքն իսկ երկու ամուսիններու մէջ: Բայց անդին ալ կարգ մը ոչինչ պատճառներու համար կրնայ խեղդի հանելը չ'արժեք:

Արդէն ամուսնալուծութեան օրէնքները ինչո՞ւ դրուած են, պարզապէս սահման մը դնելու համար տգոհ ա՞մուսիններու պահանջներուն:

Ի բաց առեալ Հայոց ամուսնական օրէնքը, որ անհասարակութեան պարագային մէջ միմիայն չնորհած է ամուսնալուծութեան իրաւունքը, Եւրոպայի միւս ազգերու օրէնքները գրեթէ միևնոյն մեղմութեամբ կը վարուին ամուսնալուծութիւն պահանջող գոգոհ ամուսիններուն:

Ֆրանսա այնքան թոյլատրութեամբ կը վարուի ամուսնալուծութեան խնդիրներուն մէջ, որ մինչև իսկ կին մը իր ամուսինէն ծանր կերպիւ նախատուած և կամ ամուսին մը իր կնոջմէն անարդանք տեսած ըլլալուն համար կրնայ ամուսնալուծութիւնը պահանջել: Բայց և այնպէս պետք է զիտնալ որ այսքան թոյլատրութիւնը քիչ քաջալերական մը չէ ամուսիններու բաժանումը դիւրացնելու: Կըրնամ ըսել որ ֆրանսացի կնիկը ի-

րենց այս վայելած թոյլատրութեան շփանալով է որ վերջերս իրենք ալ ձեռք տուին մանակցելով այն նշանաւոր Գլիպին որ հաստատուեցաւ Վիեննայի մէջ «Սոցիալալուծութեան Գլիպ» (Գլիպ սե ժամ սիլոսսէ) անուամբ և որ կը խոստանայ մեծ հրաշքներ գործել:

Սոյն Գլիպի նպատակն է, Եւրոպայի մէջ ամուսնալուծութեամբ բաժնուած որքան կնիկ կան, անոնց օգնել և իրաւունքնին պաշտպանել: Բաց աստի այն կնիկը որ կուզեն իրենց ամուսինները թողուլ, բայց ամուսնալուծութեան վճիռ ստանալու համար հարկ եղած միջոցներէն զրկուած են, անոնց դիւրացնել այդ միջոցները:

Այդ Գլիպին անդամակցող կանայք աւելի մեծ նպատակաւ մը ճամբայ ելած են, որուն հասնելու համար ամեն ձիգ պիտի թափեն:

Այդ նպատակն է ամուսնալուծութիւնը աւելի դիւրացնել, պահանջել որ օրին մէկն ալ ամուսնական օրէնքներուն մէջ (Աւստրիական կամ Գաղղիական) գրուի թէ՛

«Երբ այր և կին բնաւորութեամբ իրարու յարմար չեն, կրնան ամուսնալուծութիւն պահանջել»:

Հետեւաբար եթէ պարոնը կերակուրին անլին կը սիրէ, տիկինը ազի եթէ պարոն և տիկին բնաւորութեամբ և ճաշակով իրարու յարմար չեն, կրնան զիրար ձգել:

Արդեօք պիտի գա՞յ այն օրը որ այսպիսի ոչինչ պատճառներու համար ամուսնալուծութեան վճիռներ արձակուին և կամ պարզ քմահաճոյքի (գարբիս) մը համար այր և կին զիրար ձգելու իրաւունք ունենան Ֆրանսայի և Աւստրիոյ մէջ, ուր աւելի շատ իրարանցում կայ:

Ատիկայ գեղեցիկ սեռին գործունէութեան և իր՝ օրէնսդիր վարչութեան վրայ ներգործած ազդեցութեան կախեալ է:

Չարմանալի աշխարհ, անգին Ֆրանսացի կնոջ մը իր ամուսնոյն կողմէն եղած նախատինք մը և կամ անարդանք մը բաւ կը համարի ամուսնալուծութիւնը խնդիր ընելու և օրէնքին 232 երրորդ յօդուածը կը պաշտպանէ այդ կնոջ իր ամուսնոյն դէմ և իրաւունք կուտայ անոր որ ձգէ իր

ամուսինը ինչպէս որ ամուսինը փոխադարձաբար կնոջ դէմ, ասդին Հայաստանի մէջ կնիկը տարիներով երեսի վրայ չըլլած կը մնան, ու լիզունին անգամ չեն շարժեր, սրովհետեւ ֆրանսուհին պէս զիրենք պաշտպանող օրէնք մը չունին:

Ուրեմն ինչ է ասոր դարմանը, ահա՛ նիւթ մը որուն վրայ յառաջիկային պիտի խօսինք:

## ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

(ԿԵՆՏԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ)

Պ. Ժօրժ Տօրի, Յոյն հայրենասուր մը, փարիզեան թերթերու երբեմնի թղթակիցը, վերջերս փարիզի մէջ հրատարակած է ֆրանսերէն լեզուա գրքոյ մը «Ապսիլ Համիտ Էնթիմ» վերնագրին տակ, որուն մէջ հեղինակը Սուլթան Համիտի ծննդեան և մահութեան օրերը կը նկարագրէ մեծ խնամքով:

Սոյն գրքոյին մի բանի հետաքրքրական սողեր թարգմանաբար կ'ամփոփենք ի ստորև:

Սուլթան Համիտ Բ. Թուրքիոյ արդի վեհապետը, կ'ըսէ Պ. Տօրիս, ծընած է 1842ին, Սուլթան Մէհմետ Ի-ի մայրը, կ'ըսեն թէ աղախին մ'էր (ճարլյէ), ծագումով Հայ, որ վերջէն մահմետականութեան դարձած էր, ու էսմէ Սուլթանի քով «տանտէօզ» զերը կը կատարէր:

Ըստ ոմանց՝ Սուլթան Համիտ հայրը Հայ էր, իսկ մայրը Չէրքէզի իր թէ Սուլթան Մէհմետի պալատին Հայ խոհարարներէն մին՝ օգտուելով իրեն վայելած վտտահութեան՝ գաղտնի յարաբերութեան մտած էր էր Սուլթանուհիին հետ, և այդ միջոցին ծընած էր Սուլթան Համիտ. որով Սուլթան Համիտի հայրը Հայ խոհարար մը և մայրն ալ Սուլթանուհի մը և զամ կ'ըլլայ:

Տարբեր զրոյցի մ'ալ նայելով, Սուլթան Մէհմետի պալատին առաջին ճարտարապետ կարապետ պէյ Պալան, որ պալատին մէջ ամենէն ազատ մուտքը ունէր, յաջողած էր զրուել Սուլթանի Չէրքէզուհիին իրեն միոյն սիրտը, և մշակել այնպիսի սերտ յարաբերութիւններ ուրիշ ծնած

ըլար Սուլթան Ապտիւլ Համիտ, թուրքիոյ արդի Սուլթանը:

Այս վերջին զրոյցները պարզապէս առասպելներ են որոնց բնականաբար այնքան հաւատք չենք կրնար ընծայել: Գալով Համիտի մօրմով Հայ ըլլալուն՝ ատոր ալ չենք կասկածիր, և արդէն ստուգուած բան մըն է որ եթէ Համիտ Հայու արին կը կրէ, ան ալ ոչ թէ հօր կողմէն է, հապա մօր կողմանէ:

Համիտը բացարձակապէս կ'ուրա- նայ այս վերջին եղելութիւնը որ ճշմարտութիւն մ'է, և խտտի կը բարկանայ երբոր իրեն ըսուի թէ իր ծագման մէջ Հայու խառնուրդ կայ: Հազարամէկ միջոցներու դիմած է այս ճշմարտութիւնը սրօղելու և ին- զամիւրելու համար:

Համիտի մայրը մեռաւ 1848ին կուրծքի հիւանդութենէ մը, 26 տա- րեկան հասակին մէջ: Հանդուցեալ Տօր. Զօղրաֆոս, Սուլթան Մէհմետի բժշկապետը կը պատմէ թէ մեռնողին դէմքը տարօրինակ կերպով կեր- պարանափոխ եղած էր այն օրը:

Ապտիւլ Մէհմետ մեռաւ թորախտէ 1861ին և 39 տարեկան հասակին մէջ:

Հայր մը և մայր մը որ այնքան ստոժանելի ախտերով վարակուած էին, բնական է թէ չէին կրնար խոս- տանալ բաշտողը զաւակ մը: Արդա- րեւ Համիտ ծնաւ և հիւանդ ըլլալով ծնաւ: Մէնոր մինչև ցարդ ապրելը հրաշք մ'է:

Համիտ ութ տարեկան էր երբ կոր- սնուցող իր մայրը: Մօրը մահուանէն վերջը Նաափիգ-Միսալ հանրմի խը- նամոցը յանձնուեցաւ, որ կայսերա- կան կանանցի ամենէն հին ազա- խինն էր: Երբ տարիայ ալ մեռաւ, Սուլթան Մէհմետի չորրորդ կինը փե- րէսթօ հանրմ յանձն առաւ իրր մայր Համիտը խնամել: Եւ երբ Սուլթան Ապտիւլ Ալիզ գահը նստած տարին կուտեան ամենը ուղեց փերէսթօ հանրմը, որ իր զեղեցիութեամբը չընազ էր, փերէսթօ հանրմ մերժեց անուանանալ, նկատելով որ ինք բո- լորովին նուիրուած էր իշխանն Համի- տի կրթութեան և դաստիարակու- թեան գործին:

Փերէսթօ հանրմ դեռ ողջ է և վախտէ Սուլթանի տիտղոսը կը կրէ: պալատին մէջ ամենէն շատ յարգուող կինն է: Յաւալին այն է, որ Սուլ- թանը՝ վախտէին համակրութիւնը և այնքան մայրական հոգածութիւնը միշտ ապրտխտութեամբ փոխարի- նած է:

Համիտի մանկութեան օրերուն վը- րայ գաղափար մը տալն ալ շահեկա- նութենէ զուրկ չէ:

Այս մեծ մարդուն աւելի ճիշդը այս կարմիր մարդուն մանկական օ- րերը անցան ինչպէս կ'անցնին ուրիշ իշխաններու մանկութեան օրերը, հա- րեմի մէջ ազախիներով, լալանե- րով և հարեմ աղառի (կանանցա- պետ) ներով շրջապատուած:

Սակայն Համիտի եղբայրներ և քոյրերը՝ կողմուածքով և բնառ- րութեամբ բնառ իրեն չեն նմա- նիր: Նշանաւոր արեւելագէտ Պ. վամ-

պերի Համիտին համար, զոր պատա- նեկութեան ատենէն ճանչցած էր «գեղոյն աղայ մ'է, կ'ըսէր մեզ, լուս ու մունջ, մեկամադճիկ զէմը մը որ մատնանիշ կ'ընէ խորամանկու- թիւն և անխտահոլութիւն»:

Արդարեւ մանուկն Համիտ, իր մարդ- ատեաց բնաւորութեամբը լուիկ մեջիկ անկիւն մը կը քաշուէր, իր քոյրե- րու ու եղբայրներուն մէջ անգամ չէր խառնուէր: Ասոնք կը խաղային կը վազվառէին, մինչդեռ Համիտ հեռուէն խորունկ նայուածքներով՝ միմիայն կը զիտէր: վերջապէս ընկերութենէ փախչող էր, ընկերութիւն ըսուած բանը կ'ատէր, ու վերջին ծայր չա- րամիտ էր:

Ահաւանիկ ձեզի օրինակ մը տամ Համիտի չար արամադրութիւնները ազդեցուցանող: Օր մը իր եղբայրները թէչատ և ֆէմալէտտին խաղալ ցատ- կոտելէ վերջը յոգնած դադրած կեր- թան բազմոցին վրայ կ'իյնան: Համիտ հեռուէն դանտը կը լրտե- սէ, ու ըրենքինն տարած միջոցին, խաղալիկ դրամ ինչ որ ձեռուրին տեսած էր, կը վերցնէ ու կը տանի դարակի մէկ անկիւնը կը պահէ:

Համիտ ուսման բնառ փափար չու- նէր, ոչ ալ ընդունակութիւն:

Իր եղբայրը Մուրատ (արդի Սուլ- թան Մուրատը բանտարկեալ) որ- քան ժրջան էր և ուսումնասէր, ինքն Համիտ ընդհակառակը այնքան ծոյլ էր և աշխատութենէ փախչող: Իր ստալին դաստիարակը ֆէմալ փաշա, Խօճա Շէրիֆ էֆէնտին, իր ուսուցիչներէն ինչէն մ'է՛ փաշա, Նամըք փաշա, Պ. կարտէ ամենքն ալ իրմէ կը դանդաղէին որ չէր աշխատէր:

Իր հայրը Սուլթան Մէհմետն ան- գամ իրմէ զոհ չէր, միշտ արհամա- րանօք կը խօսէր իր վրայ:

Երեկոյ մը, Սուլթան Մէհմետ իր գաւակներովը միտսին սեղան նստած էր:

Ընթրիքը լմնալու մօտ էր, սե- ղանին վրայ ձմերուկի վերջին կտոր մը մնացած էր, Ապտիւլ Համիտի աչքը այդ կտորին վրայ մնաց. վեր- ջապէս ինչ ըրաւ չ'ըրաւ ձմերուկին կտորը վերցուց կերպով մը: Հայրը Ապտիւլ Մէհմետ, ուղղակի Միհրան պէյ Տիւզին դանաղով՝ Միհրան պէյ Տիւզի սարի վրայ կայնած ճա- շին ներկայ էր — ըսաւ. «Իմ միւս պատկերներն զոհ եմ և մեծ համա- րում ունիմ անոնց վրայ. բայց դա- լով սա անդիլինն՝ անկէ յոյս կըտ- րած եմ, մադը ըլլալիք չունի»:

Ուրիշ օր մը նոյն Միհրան պէյ Տիւզի մօրեղբօրը Տէլի Պօղոսին հետ խօսակցած միջոցին զանգատ յայտ- նեց Համիտէն:

Տէլի-Պօղոս մեկմութեամբ զգա- ցնել տուաւ Ապտիւլ Մէհմետին թէ պէտք չէ որ իր գաւակներուն մէջ խտրութիւն զնէ: Ապտիւլ Մէհմետ պատասխանեց:

«Իս ձեզի կ'ըսեմ կ'որ թէ այդ տղան մեծ էնթուկան մըն է (նենգա- միտ), երես տալու չի գար, — երեզ վերիլէճէք մախլիւք տէյիլ տիր —» ճիշդ այս բառերով:

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

#### ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ

Զմիւռնիա հրատարակող «Լա Ռեֆորմ» ֆրանսերէն կիսաշաբաթաթերթի անօրէն- խմբագիր Պ. Ստեփան Ոսկանի մահը ցաւօք իմացանք, անցեալ ամսոյ 22ին 73 տա- րեկան հասակին մէջ:

Ստեփան Ոսկան այն ազատամիտ Հայն է, որ Զմիւռնիայ մէջ թերթ հրատարակելէ առաջ, ստալին անգամ ըլլալով ֆարիդի մէջ հրատարակեց «Արեւիկ» անուամբ Հա- յերէն լրագիր մը, որ խիստ կերպով քն- նագատեց այն ամենը ազգային վարչու- թեան անգամներն ու ֆրանսարակ մի բա- նի Հայերու արարքը: Պ. Ոսկան ազատա- միտ գաղափարներով սողորուած, իր հա- սարակապետական 1848ի Ֆրանսայի յե- ղափոխութեան միջոցին կուտած ու գնա- կով մ'ալ վերադարձած էր:

1866ին վերագանալով Իզմիր, հարուստ ազգայնոյ մը գաշտպանութեան տակ սկսաւ հրատարակել «Լա Ռեֆորմ»ը, որ կը շա- րունակուէր զեռ մինչև իր մահուան օրը:

Իրր քաջ Ֆրանսագետ և հմուտ գրա- կանութեան և գիտութեանց, անուրանալի և Ոսկանի արհանիքը:

Շնորհակալութեամբ ստացանք հրատա- րակութիւն մը «Գեղունի» անուան տակ, որ ընտիր թուղթի վրայ և զեղարուեստա- կան նուրբ ոճով լոյս տեսած է վիեննայի Միխիթարեանց տպարանէն:

Իր տեսակին մէջ առաջինն է սոյն հը- րատարակութիւնը, որուն մէջ կը փայլին գեղարուեստի ամեն մասերը:

«Թերթին յառաջաբանը կըսկսի սպալս»:

### Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Շրեղին և ճաշակաւորին հայելին զեղարուեստը՝ մեր մամուլին մէջ բա- ուին ընդարձակ և ճիշդ նշանակու- թեամբ՝ երբէք գոյութիւն ունեցած չէ: Ճիշդ է մենք ունեցած ենք մի ըմբի զեղանկարներով և ճաշակաւոր պատկերներով զարդարուն հրատա- րակութիւններ, բայց ատենը զեղար- ուեստի մի մասն միայն՝ այսինքն նը- կարչականը ներկայացուցած են, ինչ- պէս վաղամեակի «Արարք»ը: Չունե- ցանք մի զեղեցիկ թերթ, ուր ըն- թերցողը զանէր զեղարուեստի ամէն մասերն՝ երաժշտութիւնը, նկարչու- թիւնը, արձանագործութիւնը, փորա- գրութիւնը, ճարտարապետութիւնը: Այդպիսի մի հրատարակութիւն, եթէ արժանաւալի կերպով լոյս տեսնէ, այն՝ Հայուն հօգին կը սքանչացնէ, լսելու ճաշակը կը փափկացնէ, պատ- կերին վսեմը, զեղեցիկը կը ներշնչէ, Մեր «Որբունի» հրատարակութիւնը ընդունուեցաւ իրր Գեղարուեստական կատարեալ գործ մը, մինչդեռ նա մի միայն խնամատիւլ հրատարակու- թիւն մըն էր: Նոյնպէս ներկայ գործս, որ իրր զեղարուեստական (և ոչ թէ զրական) հրատարակութիւն մը լոյս կը տեսնէ, մենք կը կանխենք ըսն- լու, որ սա տակաւին շատ պակա- սաւոր է. այն տեսն մենք ամէն ջանք պիտի թափենք կատարեալ զեղար- ուեստական մի գործ ստեղծել մեր աղքատիկ մամուլ մէջ, երբ ապահով

ըլանք՝ որ մեր հրատարակած պրակի կարող պիտի ըլլայ իր ծախքն զոցե- լու, ինչպէս ոմանք ըսին, անտարա- կոյս մենք Եւրոպայի մէջ զեղեցիկն ու ճաշակաւորին մէջ ապրելով, ա- լելի ձեռնհաս ենք և աւելի դիւրու- թեամբ կարող ենք ստատրելու հայ մամուլը զեղարուեստական մասնաճիւ- ղին բան թէ միւս ազգային մամուլ- ները՝ որ կը գտնուին յԱրեւելս: Ու- րեմն առ ի փորձ, առ սյժմ՝ իրր նուէր մեր «Բաղմամէլ»ին բաժա- նորդաց, մերթ ընդ մերթ կը սկսինք հրատարակել այս գործը. այն ամենը որոնք բաժանորդ չեն մեր «Բաղմա- մէլ»ին և կը փափարին ունենալ այս թերթը, յղեալ են 2.30 ֆրանք:

ԽԻՐ. ԲԱՅՄԱԿԵՊ. Ի

Յաւ ի սիրտ կ'իմանանք թէ Այրի Տիկին ՄԱՆՆԻԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ վախճաներ է յԱղբարանըրեա ան- ցեալ ուրբաթ օր:

Տիկին կամարական մայրն էր Ա- զեքսանդրիոյ մէջ ծանօթ վաճառա- կան Ալեհնակ և Տիգրան կամարու- կան էֆէնտիններուն և հայ ընկերու- թեան բարձր դասուն մէջ խիստ յար- գուած մէկն էր իր կենցաղագիտու- թեան և ազրատասիրութեան համար: Կամարական զերգատանի բազ- մամիւ բարեկամներուն կը միանայ նաև թերթի խմբագրութիւնը իր վշտակցական զգացումներուն արտա- յայտութիւնը ներկայացնելու համար սղբացեալ Տիկինը զաւակներուն և ընտանեացը:

### ԶԱՏԿՈՒ ԱՌԵՐԻ

Չափուան օրերուն մէջն ենք, կ'արժէ որ քիչ մ'ալ կրօնականով գրաղինք:

Անցեալ կիրակի, Մուսրիի պողոտային վրայ, Լատինացոց եկեղեցին վերագոր- ձող երկու օտարագիրներու խօսակցութեան առարկան էր թէ՛ պէտք է որ եկեղեցոյ նստարաններուն վրայ բոլորով ըստ ըլլան էրիկ մարդիկ ինչպէս նաև հագուած սպուած մանկամարդ կիներ և օրիորդներ: Գայթակցեցուցիչ բան մը չէ՛ սաի. փոխան բարեպաշտութեան ներշնչուող եկեղեցին ին- չո՞ւ տեղի տայ դիւրախար ներկաներուն նոր մեղքեր, ցանկութիւններ գործելու, այն ալ սրբավայրի մը մէջ, և այնպիսի օր մը մա- նաւանդ երբ մարդը արդէն կը միտի դէպ ի չարն ու անկրօնութիւնը: մինչդեռ զեղեցիկ սեղը վերնատան մէջ հիւրասիրելով՝ զերկին բան մը պիտի ըլլար շատ մը հոգեմուր փորձութիւններու առաջը աննէ:

Երկու օտարագիրներէն մին՝ իր փաստե- րով կ'ատարկէր որ ցանկութիւնը կն. ար- գելք մը չէր կրնար ըլլալ որ այր և կին տարբեր տեղեր դասաւորուէին եկեղեցին մէջ, իսկ միւսը, քիչ մ'աւելի աշխարհիկ և թերես փորձութիւններու հակամէտ մարդ, յամաօրէն կը պնդէր հակառակին վրայ:

Աւասիկ հակամտութիւն մը որ քիչ մը վերջ արձագանգ կը գտնէր քանի մը Հա- յերու ընկերական շրջանակին միջև: Ու որչափ մարդ՝ այնչափ կարծիք:

Անճաչ չենք համարի որբնն այսպիսի խնդիր մը հրապարակ նետել, ձեռնհաս ընթերցողներու կարծիքն ալ շօշափելու հե- տաբերութեամբ:

Միրելի է մեզ յոտալ թէ «Նոր-Օր» յօտարակամ պիտի հիւրընկալէ հրատարա- կելու արձանի շահեկան պատասխանները, «Զատիկ առթիւ» վերնագրին տակ:

ՊԵՐՊԵՐԻՆԵՐԸ ՄԵՐ ՄԻՋ

«Փար տ'Ալեքսանտրի» իր վերջին խի-  
ւերն մեկուն մէջ հրատարակած է խմբա-  
գրական մը Երկրորդ Պրոգրեսիւնը վե-  
րաբերմամբ, զոր ի ստորին կ'ամփոփենք իր  
շահեկանութեանը առթիւ:

Եզրկատուի Պերպերինները միայն  
միջնակարգ ընտանիքներու մէջ չէ  
որ կը ծառայեն, այլ նաև էն ազ-  
նուպետական տունները կը մտնան,  
իբր ծառայ, խոհարար: Եստ տու-  
ներ Պերպերինները՝ ազգայնի և կամ  
զայնակի մը ընկեր ծառայութիւնն  
անգամ կ'ընեն, անկողին կը շտկեն,  
սղախոյ զգեստները կը հագուեցնեն,  
կը հանուեցնեն, կը պառկեցնեն, կը  
խնամեն:

Տան մալուրը կատարեալ վստա-  
հութիւն ունին այս Պերպերիններուն:

Ոչ կը հարցնեն կը ինտուն, ոչ  
ալ հակողութիւն կ'ընեն իրենցմէ վըս-  
տահելի կոչուած Պերպերիններուն  
վրայ, այն Պերպերինները որոնց բա-  
րոյականի մասին ոչ ոք կը համար-  
ձակի լաւ յանձնարարութիւն մը տալ:

Ո՞վ չգիտեր թէ Պերպերինները ընդ-  
հանրապէս կը սիրեն պղտիկ աղջիկ-  
ներ 10—16 տարեկան, որոնց հա-  
մար խենդ կ'ըլլան. ընդհակառակը  
մեր մայրերն ալ այդ տարիքին մէջ  
գտնուած աղջիկներին ամենակա-  
տարեալ վստահութեամբ կը յանձնեն  
այդ Պերպերի ծառաներուն, ինչպէս  
որ պիտի յանձնէին աղախնի մը և  
կամ դայակի մը: Ալ կրնաք երե-  
ւակայել թէ ինչ անպատեհութիւններ  
տեղի կուենան մութին մէջ. շատ  
անգամ Պերպերին իրեն յանձնուած  
պաշտօնին առթիւ օգտուելով, գիրկը  
կ'առնէ անմիջ հրեշտակ աղջիկ մը,  
որուն անարատ բարոյականին հետ  
կը սկսի խաղալ և իր սև հեշտան-  
քին գոհացում տալ:

«Փար տ'Ալեքսանտրի» իր ըսածը աղա-  
ցուցանելու համար մէջ կը բերէ ի մանա-  
տրի դէպք մը որ տեղի ունեցած էր ան-  
ցեալ օրեր Աղեքսանդրիոյ մէջ, և կ'ըսէ.

Պերպերի երիտասարդ մը ճամբան  
գնացած ատենը 16 տարեկան արար

աղջկան մը կը հանդիպի: Պերպերին  
այնքան կը յափշտակուի որ ասանց  
չուրջիններէն ահիւստի, կը դրկէ  
աղջիկը ու կատարի համարայրենի կը  
դրուէ խեղճին: Աղջիկը սրբան ձայն  
ունի կը ձգէ, Պերպերին այնքան կա-  
տարութեամբ վախժմուած կը սեղմէ  
իւր սրտահասկան սիրուհին: Մէկ  
վայրկեանին մէջ 400 հոգիէ աւելի  
բողմութիւն կը խոնուի տեղւոյ վրայ:

Պերպերին և աղջկան կողմէն բա-  
րեկամներ կը հասնին. կատարի կու-  
մ'է կը փրթի ասանց մէջ: Գաւազա-  
նի հարուածներով մէկդմէկ կը տփեն.  
բանի մը հոգիներ ալ կը փրատու-  
ուին:

Առաջին անգամ չէ որ կը պատա-  
հի այս դէպքը. ուրիշ անգամներ ևս  
արձանագրած ենք այսպիսի գայթակ-  
զալի անպատեհութիւններ, միշտ Պեր-  
պերիններու կողմէն տեղի տրուած:

Հետեւեալը կը յորդորեն ընտա-  
նեաց մայրերը որ իրենց ասանց մէջ  
ծառայելու համար Պերպերի մը վար-  
ձելէ առաջ տեղեկանան անոր վար-  
քին ու բարքին վրայ: Եթէ Պեր-  
պերին պարկեշտութիւնը յանձնա-  
րարուած ալ ըլլայ, դարձեալ մայ-  
րերը պէտք չէ որ անհոգ դռնուին  
և իրենց զաւակները ինչպէս որ պի-  
տի յանձնէին աղախնի մը և կամ  
դայակի մը, յանձնեն միւրոյն վստա-  
հութեամբայդ Պերպերիններուն:

ՏՈՒՌԱ ՄԻԻՋԻԿԻՄԱՆ  
(ԻՍՒԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱՋԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին  
մասը Եզրկատուի արդարութեան  
Գործոց Նախարարութեան կողմէն  
նրբակազմ վարձատրութեամբ գնա-  
հատուած և Եզրկատուի գատարաննե-  
րուն մէջ գործածութիւնը պաշտօ-  
նապէս ընդունուած է:

ԲՈՎԱՆԴԱՆԻԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն ժառանգական  
օրինաց և ժառանգութեան իրաւանց

համար: Սոյն պարագայից մէջ՝ անհամա-  
ձայնութեան ենթակայ եզր կողմերը Ընդ-  
հանուր Ժողովոյ մէջ խօսք միայն ունին և  
ո՛չ բուէ:

Ե. Ազգային Սահմանադրութեան վերա-  
բընդմտեանը համար:

Եւ վերջապէս այնպիսի խնդիրներու հա-  
մար որոց վրայ որոշում տալը Ընդհանուր  
Ժողովոյն կը վերաբերի:

Սակայն այս տեսակ արտաքոյ կարգի  
նրտներուն տեղի ունենալէն առաջ՝ Ընդհա-  
նուր Ժողովոյ գումարման պատճառը Պա-  
րիսը արանի կողմէն Բարձրագոյն Դրան  
իմաց տրուելով, անոր հաստատութիւնը կ'առ-  
նուի:

Յօդ. 62. Պատրիարքը կը գումարէ  
Ընդհանուր Ժողովը, Կրօնական և Քաղա-  
քական Ժողովոց մէկուն համահաստատու-  
մբ, և կամ նոյն իսկ Ընդհանուր Ժողովոյ  
անգամնց մեծագոյն մասին խնդրանքը:  
Միայն թէ այս կերպ արտաքոյ կարգի ժո-  
ղով գումարելէն առաջ՝ գումարման պատ-  
ճառը Բարձրագոյն Դրան իմաց տրուելով,  
անոր հաստատութիւնը անուշ հարկ է:

զազման վրայ. — Ժառանգութեան  
պայմանները. — Ազգականութիւն և  
աստիճանները. — Գերութիւն և ժա-  
ռանգութեան հետ ունեցած կապերը. —  
Ժառանգութեան զրկող պատճառներ. —  
Մարդասպաններու ժառանգութիւնը.  
— Տիէթ (մարդու արեան գինը). —  
Ժառանգութեան մը պարտքը և պա-  
հանջը. — Ժառանգորդներու կարգը  
իրենց աստիճաններովը:

Ժառանգութեան օրէնքին տրամա-  
դրութիւնները ուրոյն ուրոյն մեկնը-  
ւած են: Գրքոյի վերջը գրուած է  
ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը  
նշանակէ թէ ժառանգութեան օրինա-  
կան բաժինները ինչպէս կը բաժնը-  
ւին:

Երկրորդ մասը մօտ ժամանակէ  
ըջ պիտի տեսնէ՝ խնամակալութեան  
կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ  
վրայ ընդարձակ ծանօթութիւններով:  
Գին 10 ԳԱՀ. ՈՂ.Պ

ԿԱՐԵՆԻՍՐ Ա.ՉԳ.

«Նոր-Օր» Ս. տարեշրջանը լրա-  
նալու մօտ ըլլալով, յառաջիկայ շա-  
բաթ օրուան թուով պիտի հրատա-  
րակենք տարեկան Ընդհ. Հաշուեկը-  
չիւղը, հանդիման մանրամասն ծանօ-  
թութիւններով:

Սոյն Հաշուեկոյն պիտի կցենք  
նաև բոլոր բաժանորդներուն անուն-  
ները, իրենց վճարումներովը: Հետե-  
ւաբար անոնք որ մինչև ցարդ չեն  
վճարած, հաճին գէթ առ ի կանո-  
նաւորութիւն մեր հաշուի, փութով  
դրկել իրենց բաժնեգրին, մինչև յա-  
ռաջիկայ ուրբաթ:

ԾԱՆՍՊԱՐՏՈՐՈՒԹԻՒՆ  
ՄԷԼԻՏՈՒՊՈՒԷ ԵՐՈՒՍԱԳԷՄ

25 ՕՐ ՊԱՂԵՍԻՏԻՆՈՒ ՄԷՋ

(Շարունակութիւն մախորդ թիւէն)

— Որովհետեւ երկար տարիներ ծառա-  
յիւր եմ այդ հոշակուած վանքի մէջ, ուս-  
տի սրտով ձեզ հետ մինչև վանքը կերթամ  
ըստ խնամքով տանկիւն լեզուով:

— Դուք ազգա. Յոյն չէք, — հարցուցի:  
— Ոչ. Պաղարք եմ:  
Կէս ժամու չափ բարկէ վերջը՝ հասանք

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԵՍՓՈ-  
ՒԱՆԱՅ

Յօդ. 63. Կոստանդնուպոլսոյ մէջ գրա-  
նուղ բոլոր Եկեղեցական Պատրիարքի  
հրաւիրանքը ապրիլ ամսոյ վերջը որոշեալ  
տեղ մը կը գումարուին, և զազմոյի բուէ-  
արկութեամբ ու բուէից բացարձակ առաւե-  
րութեամբ Ազգային Ընդհանուր Ժողովոյ Ե-  
կեղեցական անպաշտել կ'ընտրեն, թէ՛ Ե-  
պիսկոպոստներն, թէ՛ վարդապետներն և  
թէ՛ Գահանաներն. բայց պետք է որ ըն-  
տրելիք՝ գուրբերը պաշտօն չունենան. և  
հասակաւ երիտուն տարին լրացուցած, և  
զոնէ հինգ տարի առաջ ձեռնադրուած ԲԷ-  
լան, և ո՛րևէ գատաստանի տակ չը գըտ-  
նուին:

Յօդ. 64. Եկեղեցական Երեսփոխանաց  
պաշտօնը տասն տարի կը տեւ. և երկու  
տարին անգամ մը՝ հինգերորդ մասը փոխ-  
ուելով կը նորոգուի: Այս հինգերորդ մասը  
առաջին ութ տարիներուն մէջ՝ վիճակաւ  
պիտի որոշուի և հանուի. և թէ՛ վիճակաւ  
եղած և թէ՛ տասնամեայ պաշտօնը լրացու-  
ցած անգամները անմիջապէս վերընտրելի են:

Հայոց վանքը, որի գուրը արդէն փակ-  
ուած էր:

Քաղաքավարի և հիւրասէր Պաղարք մի  
բանի անգամ վանքի անգին գաւթապուր  
զարկաւ, բայց բացող չեղաւ: Երբ զարկը  
մի բանի անգամ ալ կրկնեց, այն ժամա-  
նակ ներսն իսու ձայն մը լսուեցաւ, սրն  
կը հարցնէր:

— Ո՞վ է:  
Պատուական Պաղարք՝ իր անունը տա-  
լով՝ պատասխանեց:

Քահանայ-ուխաւար եմ բերած: «ուխ-  
տաւար» անունը շատով դուր բանալ տուաւ:  
Եւ մենք երես ալ ներս մտանք:

Հասանք մի սանդուղի մօտ. պահապա-  
նը ըսաւ. — Տէր Հայր, այստեղ բիշ մը  
սպասեցէք, ես կերթամ հիւրընկալին մօտ,  
եւ գնաց վազելով:

Քիչ ժամանակ չեցայ իրեզննելիս  
մօտ, հասկցայ՝ որ միտքան պատուական եղ-  
բայրները գիշերուան 9 ու կէս ժամին ար-  
դէն կը բնանան: Նա մանաւանդ սենեակ-  
ների պատուհաններէ ո՛չ մի լոյս չէր ե-  
րեւնար:

Սա իրեզննելիս մօտեցալով ըսաւ:

— Տէր պապա, արի բիշ սենեակը տա-  
նիմ. հիւրընկալը վերջն պիտի գայ, իրե-  
զններս ալ սանդուղին վեր հանեց:

Մտանք մի սենեակ, որի մէջ ո՛չ աթոռ  
և ո՛չ սեղան կար, այլ միայն յասակի վրայ՝  
պատերի մօտ, կապերաների վրայ փոռած  
էին անկողիններ՝ հանդիման սակուած բար-  
ձերով:

Գոնապանը իրեզննելիս տեղափոխել և  
կանթեղը վառելէ յետոյ հետացաւ զիս մի-  
այնակ լծողով:

Երկար ճանապարհորդութիւնը զիս բա-  
ւական յոգնեցուցած էր, ուստի՝ գոնապա-  
նի հետանալէ վերջը՝ մի կողքս վրայ  
պառկած բիշ մը հանգստացայ. կը պիտի  
սենեակի առաստաղը, պատերը պատուհան-  
ները և փոռածքները. Եթէ սենեակի շի-  
նութիւնը հին կերէր, սակայն նորա շա-  
փաւոր մաքրութիւնը ակներև էր շնորհիւ  
հիւրընկալ վարդապետի, որուն հետ զիս ծա-  
նօթացած չէի:

Սանդուղի վրայն տակաւ առ տակաւ  
ձայներ կը լսուէին. կը հասկցուէր, որ մէկը  
կը բարձրանար և կ'ուզար իմ սենեակը:

Եկողը զեռ չի տեսած՝ ոտքի կայ, որ  
զիմաւորեմ: Հայր մօտեցելի կի սենեակիս

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԵՐԵՍՓՈ-  
ՒԱՆԱՅ

Ա. Ընտրուողի բեան եւ ընտրելու բեան պայմանի  
Յօդ. 65. Ընտրողական իրաւանց հիմն  
կը բունուին Ազգային տուրքը, և անձնական  
արժանիքը:

Ազգային տուրքը ընտրողութեան իրա-  
ւունք տալու համար, պէտք է որ ընտրողը  
տարին գոնէ եօթանասուն և հինգ դուրս  
ընդհանուր տուրք վճարէ:

Ընտրողութեան անձնական արժանեօր  
իրաւունք ունեցողներն են՝ Արքեպիսկոպոս-  
տներուն և Տէրութեան ուրիշ պաշտօններուն  
մէջ գտնուողները. վկայեալ բոլորները. օգ-  
տակար գրքերու հեղինակները. գարատանց  
ուսուցիչները. և ազգին օգտակար ծառա-  
յութիւններ մատուցած անձինք:

Յօդ. 66. Ընտրողութեան իրաւունք  
ունին քսան ու հինգ տարին լրացուցած  
անձինք: սակայն ընտրողը հարկ է որ Օս-  
մանական Տէրութեան հպատակ ըլլան:

(Շարունակելի է)

ԱԶԳԱՅԻՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՑ

(Շար. մախորդ թիւէն)

Սոյն երկ-տարեկան Ժողովը սկսած օրէն  
մինչև երկու ամիս տեւելով իր նիստերը կը  
վերջացնէ:

Ընդհանուր Ժողովոյ այս նիստերուն մէջ՝  
միանգամայն Ազգային վարչութեան Ժողով-  
ներուն անգամ գտնուող Երեսփոխանները  
ամեն խնդրոյ վրայ կրնան խօսիլ. բայց  
աւրբի և ընտրութեան խնդիրներն զատ՝  
ուրիշ խնդիրներու մէջ չեն կրնար բուէ տալ:

Բ. Կաթողիկոսի ընտրութեան մասնակից  
ըլլալու համար:

Գ. Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի  
Պատրիարքները ընտրելու համար:

Դ. Կրօնական և Քաղաքական Ժողովոց  
մէջ, կամ Պատրիարքին ու Ժողովոց մէջ  
պատահած անհամաձայնութիւնը բաժնաբա-  
նալու համար:

դրան, յանկարծ նրան միջնահասակ և յաղթանակամ վարդապետ մը բացառ և մենք միս-կանց ողջունեցինք, յայտնելով փոխադարձարար մեր անունները և մականունները:

—Տէր Սրբապետ, ես ձեզ հետ վարդաց ծանօթ եմ. որովհետեւ ե. Պոլոյ «Փունջ» լրագրի մէջ միշտ կը կարգամ ձեր յօդուածները: Շատ անգամ մի բանի վարդապետներս՝ իրարու հետ խօսելու ժամանակ՝ յայտնած ենք ցանկութիւն՝ ձեզ այս տեղ իրրև ուխտաւոր տեսնելու:

—Հասցա որքան ես բազմաւոր կը համարիմ զիս Ս. Յակոբեանց վանքի միաբանութեան մէջ զանուկուս համար: Գանի՛ տարիներէ ի վեր կը խորհէի ուխտագնացութիւն ընել զեպի այս պատմական, իմ սըրտին շատ մտախի սեղերը...: Վերջապէս կրողներս իրականութեան սահմանի մէջ մտան:

—Արժանապատիւ Սրբապետ վարդապետ, շարունակեցի, խոնարհարար կը խորհեմ ձեզմէ այս մի շէշ Ղրիմու գինին և մի արդ խաղաբար հասցնել Մամբրէ Սրբազանին: Սրբա ընծայ են Մեկտոպոլի մէջ բնակող Հանի Գրիգոր Խապապամեանի կողմէ Նորին Գերապատութեան:

—Վաղը անպատճառ Սրբազանին կը հասցնեմ զրիւսած ընծաները:

—Ժողովուրդներն մի բանի անձինք պատուիրած են ինձ ցնել մամբր և ձեթ՝ Բրիտանոսի գերեզմանին վրայ վառելու համար:

—Այդ փողերը յանձնեցէ՛ք Պատրիարք Հօր. ինչ որ պէտք է նա կը կարգադրէ:

—Մի խնդրանք ալ պիտի ընեմ ձեզ, որովհետեւ ճանապարհորդութեան կը նկարագրեմ, հետևարար գրելու տեղ պէտք է ինձ: Այս սենեակի մէջ սեղան ու արձու չկայ: Կարելի է այդ մասին այժմ եեթ ծառայութիւն մը ընելիք: Թերևս այս գիշեր առանց գրելու չի մնամ:

—Վաղը զուր կունենաք աւելի լաւ կահաւորուած սենեակ, ուրտեղ ամեն ինչ պատրաստել կուտամ:

—Կրնամ վաղը Պատրիարք Հօր ներկայանալ:

—Նախ քան զձեզ կը ներկայացնեմ Գերապատիւ Ներսէս Սրբազանին, փոխանորդին Պատրիարքի, որն զձեզ կը ներկայացնէ Նորին Ամենապատուութեան:

—Այստեղ է թանկագին Իզմիրեան Սրբազանը:

—Այո՛, այստեղ է: Նա բաւական ժամանակ հեռանց էր. բարեբաղդարար այժմ աղէկ է:

—Եթէ զիտեանի՛ք թէ՛ որքան կը ցանկամ նորան տեսնել, խօսածները լսել և ունեւալ փոխանակութիւն մտքերի...: Եթէ կարելի լինէր, այժմ եեթ կ'երթայի մօտը ու չորէ-չորէ բայելով կը մօտենայի ու կը համարուէ նորա ճշմարտագէտ Սուրբ Աջը...: Այն Աջը... որի զօրութիւնը ամբողջ աշխարհին յայտնուեցաւ...:

—Լաւ է, եթէ զուր նախ Պատրիարք Հօր ներկայանաք. կարգը պահպանելու համար ըսածիս պէս վարուեցէք:

—Ամենայն սիրով պատրաստ եմ են թարկուելու վանքի կարգին ու կանոնին, պատասխանեցի:

Այն ատեն Սրբապետ վարդապետը իր գրպանէն հանեց ժամացոյցը և բարձր ձայնով ասաց.

—Տէր Սրբապետ ժամը 12 ն է. Հանգըստացէք սր կազուրուրէք: Ես ես ցնամ: Գիշեր բարի:

Սրբապետ վարդապետի երթալէն յետոյ, ես ես շուտով բռնեցի կայ:

(Շարունակելի)

ՍՐ. ՔՆՆ. ՍՍՄՈՒԷԼԵԱՆ

### Ա. Զ. Դ

Եղիպտոսի, Արտասահմանի և կովկասի արգոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագրիները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Եղիպտոսի բաժանորդները կրնան Մանտո-Բոսթով ուղարկել իրենց բաժանորդագրիները. թերթիս վերելը նշանակուած հասցէին:

### ԿՈՒՋԷՔ ԲԱՂՂԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք Ժողովրդական Տարեցոյցէն հատ մը, ուր շատ մը զուարճալի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև զեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փախաբողք թող հաճին դիմել սու Տ. Օհան Խնտամեան, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու մասին յանձնարարութիւնը փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը:

Շրջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին կը շանձնարարութեան համար գրասի տեղ թերթի մարտի 40 Դ. Դ. 112 112 Պարզ օրացոյցինը 2 " "

### Ա. Զ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրտութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապա-էլ-Ալիզի սկիզբը Պ. ԿԱՐՍՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խոնարհ ինչպէս նաև Գլխ-Պէյ փողոցի ծայրը և թերթամիջիններու կայարանին մօտ ծխափաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵՏՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

### ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ զրամատուները, այս անգամ ունեցաւ իւր Եղիպտոսի զարձակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրատարակչին ցոյց տուած պարկեշտ զործունէութեամբն ամենուս վտասհովիտը կը վայելէ:

Սոյն զործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքագիտութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ զրամական և ֆուէտի ֆոնտիչէի, վիլ սը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու զործողութիւններ, զանձուամեր-Ամսական շնչին գումարի մը իննսոյողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաստուած:

Փախաբողիները հաճին դիմել Նուպառի վրայ փաստարան Ռարթաքիի զրամանեակը:

Թողթակցութիւն և կամ զրամ զըրկել հետեւեալ հասցէին:

### Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

### ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

### Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահիէ սը Լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնուի:

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազբատները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

### ՊԵԼԱԵԱՆ-ԺԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ  
ԱՐԱՆՅ ԵՒ ՏԵԿՆԱՆՅ  
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՈՐՑ

Ապօրինի մեծ պողոտայի վրայ Տայիւայի Սանիթի դիմացը, Գալիկոն ելեկտրական գործիներու վաճառատուներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան լիւ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախորդները, գործի մարթութեան, զիններու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:

Մեր գործատեղը այն մէջ կ'ուսանդուին նաև ձևագիտութեան դասեր ամերիկեան ամենալեզրիկ կատարելաբար սովորած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

### ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

### ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՁԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապան  
Նիկու-Տերիքիսի Ղեղարանին պիմացը.

Օղատուն ու զուարճալի զիլք մտքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մեղաբար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացոյցակ մը զիւրամասալի գիներով ունա՛ Գազանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վտահ պէտք է ըլլոյ թէ մշտակայ յաճախորդը պիտի գտնուի հայկական ճաշարանին:

Տպա. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

**Տ Պ Ա Ր Ա Ն**

**Ի ԳԱՀԻՐԷ**

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

**ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**

**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՁԵԱՆ**

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցիտոմներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակագրուաններ, պահարաններ, հաշուեցոյցակներ ևն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենալի խնամով և մաշակաւոր սպազրութեամբ:

**ՁԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**